սակ անյաղթ կայսեր և թագաւորին մերոյ...։ Ի պէլլըղատ էշ բարկութիւնն աստուծոյ, քանզի ընդդէմ դարձեալ ալայեացւոց, ուք էին վաշխառուք, այսինքն իբեք հարիւր վաթսուն մամէլէ է, որ առնէ տասնին երեք յամսեանն. և այսպէս ապականեալ զերկիրն. պօշնախք յարեան ի վերայ նոցա, և նոքա ամրացան ի բերդն. յայնժամ պօշնախքն դարձան ի տունս ի կրպակս, և ի խանս նոցա աւար հարին զամենայն, և եառն նոցա մնաս յինչսն իբրև յիսուն հազար քսակի. զմի էնտազէ ինկիլիզի չուխայն իսկէռլէթ վաճառէին 2 մարխաչի, որ է 3 լիբէ. և զհօխայն խահվէին չորս փարայ, և այնչափ աղքատացուցին զմեծացեալսն անիրաւութեամբ, մինչ զի անհաւատալի է ի լսել. որ երկու հարիւր քսակի տէրն էր, առանց զօտւոյ սոսկ տրեխաւ վարեցաւ ի պէլլըղատու. զորոց զմին և մեք տեսաք աստ. որ յայլոց մուրացաւ զմի մարխաչ առ ի գնել զհաց, և ոչ սատակիլ ի քաղցու։ Իբրև այս համբաւ տարածեցաւ ի պօսնա, իսկոյն հաւաքեցան ի պէլլըղատ պօշնախք աւելի քան զտասն հազար, և սկսան պատերազմիլ ընդ ալայեացւոց, ուք ամրացեալ էին ի բերդի անդ, պօշնախք առին զերկուս պատնէշս բերդին և զերրորդն տկարացան ի յառնուլ։ Այս պատերազմ ոչ դադարեցաւ զտիւ և զգիշեր իբրև զաւուրս 55։ Ցայսչափ աւուրսն ալայեացիք ի յարքունի ճէպհանայէն ծախեալ էին զպարօթ և զայլ կահս պատերազմի իբրև վեց հազար քսակի. և այս ճշմարիտ է, քանզի ի կոստանդնուպօլսոյ եկեալ թախս էմինի, քննեաց և եգիտ այսչափ պակասեալ յարքունի ճէպհանայէն։ Ի պատերազմի անդ անկան պօշնախք եօթն հարիւր. ի յալայեացւոց սակաւք, քանզի էին ի ներքս բերդն։ Իսկ քաղաքն ամենեւին կործանեցաւ։ Յուսկ յետոյ եկեալ ղափուճուպաշի և եէնիչէր աղասի խաղացուցին զպօշնախսն, և զալայեացիս հանեալ արտաքս վարեցին ի պէլլըղատու և յամենայն սահմանաց պօսնայու և զգլխաւորաց նոցին զոմանց զգլուխս հատին, և զերեսուն ոգիս ունին ի կալանս, մինչև այլքն վճարեսցեն զմնասն տուեալ արքունի ճէպհանէին։... Լուեալ եմք, թէ փորթոզալ ծածկեալ է ընդ հողով ի մեծէ գետնաշարժէ. եթէ ստոյգ է, ծանուցէք մեզ. ողջ լերուք։

Նուաստ ծառայ

[1]756 *մարտի* 26 — *Հ. Յովհաննէս վրդպ. պոնտացի*

[*Վարատին*]

ՃՁԵ.

Բանի մը շահագրգռական մասեր ունի վաւերաթուղթս. նախ Մծբնայ գրքին տպագրութեան իրագործման շուրջ. երկրորդ՝ Հռովմ գտնուող Լիբանանցիներուն մասին, և երրորդ՝ վրացի Կօրկի խանին արարքներուն վրայ։

Ցեառն տեառն Գերյարգելի Աբբայ հօրդ մերոյ ողջոյն սիրոյ և պատւոյ

Ընկալայ զպանծալի գիր ձերոյ Յարգելութեան ի մարտի 27, 1756, *տեղակացեալ ըստ ամենայնի, և մխիթարեցայ ոչ սակաւ զորս ծանուցեալ էք։ Նախ առ այն պատասխան զի յառաջ գրեալ էիք սակս թարգմանութեան էնշիքլիքային և պահել ինձ ի ներքոյ լռելեայն, զոր արարի նոյնպէս մինչ յայլոյ լուայ, և ապա գրեցի առ Յարգելութիւնդ։ Երկրորդ եմ պատրաստ առ ի ծանուցանել ձեզ զվերջանալն սրբազան Հայրապետիս մերոյ Յակոբայ վասն գրքին նորա, որ է վերջին յայսմ մարտի եգերի. և ապա սկսանի էնշիքլիքան. թէպէտ վերջացաւ, բայց զբոլորն նախերգանաց տպեն այժմ. զի ոմն Եպիսկոպոս յազգէն յասորւոց գրեալ է վասն վարուց սրբազան Հայրապետիս նոյն Յակոբայ, լադին և յունաց լեզուաւ զիմն գիրք ի նմանէ հանեալ շարակարգէ ի Բրօբականտան, բայց ոչ գիտեմ եթէ որպիսի գնայ։ Երրորդ զկոլոտ Պատրիարգի կոնտակն յայնժամ թարգմանեալ էն ի Հայէ առ իդալի զորս զերկուսն օրինակեալ եմ, այժմ են ընդ յիս։ Իսկ վասն լիբանա[ն]ցւոց այս է. յայնժամ գրեցի առ Յարգելութիւնդ, որ էր ճշմարիտ, զի բնաւին*